ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«13» հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ. Անանյան

ԳԲԽ-105/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Վարբադ» ՍՊԸ-ի 28.09.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Վարբադ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Վարբադ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 28.09.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Միաֆազ շարժիչների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-

15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքով տեղեկացրել է, որ Ընկերության կողմից առաջարկված գինը եղել է ամենացածրը, ուստի պատվիրատուի կողմից պահանջվել է ներկայացնել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը: Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է առաջարկվող ապրանքի անվանումը՝ «Вепрь АБП 2,2-230 ВБ-БГ» տեսակի միաֆազ բենզոագրեգատ իր տեխնիկական բնութագրով, որոնք տրամադրվել էին արտադրող գործարանի կողմից:

Սակայն գնահատող հանձնաժողովը 02.05.2016թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության առաջարկը գնահատել է հրավերով սահմանված գնման առարկային ոչ համարժեք՝ պատճառաբանելով սահմանված գաբարիտային չափերի տարբերությունը և ելքային լարումը: Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը «Վարբադ» ՍՊԸ-ի հայտը ոչ համարժեք գնահատելու պայմաններում չի ունեցել համապատասխան հիմնավոր հիմքեր, քանի որ Ընկերության առաջարկված տեխնիկական բնութագրի հատկանիշները չեն հակասել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընկերության կողմից առաջարկված ապրանքի բարձրության չափսերը եղել են մինչև 560 մմ, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է մինչև 550 մմ: Սրանից ուղղակիորեն երևում է, որ եթե հրավերով պահանջվեր կոնկրետ 550 մմ, իսկ Ընկերությունը առաջարկեր կոնկրետ 560մմ, այսինքն՝ երկու դեպքում էլ բացակայեր «մինչև» բառը, ապա այս դեպքում պատվիրատուն իրավացիորեն կարող էր մերժել Ընկերության հայտը՝ ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

«Վարբադ» ՍՊԸ-ի առաջարկած մինչև 560 մմ բարձրությունը, ըստ Ընկերության, չի հակասում հրավերի մինչև 550 մմ բարձրությանը, քանի որ Ընկերության կողմից մատակարարվելիք սարքի բարձրությունը չպետք է լինի հենց 560 մմ, ինչը կգերազանցեր հրավերի պայմաններին, այլ Ընկերության կողմից առաջարկած մինչև 560 մմ պայմաններում կարող էր լինել, օրինակ՝ 520 մմ, 530 մմ, 540 մմ և այլն:

Ինչ վերաբերվում է «Վարբադ» ՍՊԸ-ի առաջարկած ապրանքի երկարության ոչ համարժեք գնահատելուն (հրավերով պահանջվել է երկարություն՝ մինչև 600 մմ, իսկ Ընկերությունը առաջարկել է մինչև 650 մմ), ապա Ընկերությունը գտնում է, որ

գնահատող հանձնաժողովը «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած նման տեխնիկական բնութագրի պայմաններում հենց հայտերի գնահատման փուլում իրավունք չուներ մերժել Ընկերության հայտը՝ պատճառաբանելով սահմանված գաբարիտային չափերի տարբերությունը, քանի որ «մինչև» բառի պայմաններում տարբերություն ակնհայտ առկա չէ: Ուստի ապրանքը «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից մատակարարելուց հետո միայն ՀՀ պաշտպանության նախարարությունը կարող էր հիմնավոր գնահատել, թե մատակարարված ապրանքը ինչպիսի երկարություն (580 մմ., 590 մմ., և այլն) կամ բարձրություն (520 մմ., 530 մմ., և այլն) ունի, և համեմատելով պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի հետ՝ ընդունել կամ չընդունել «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած ապրանքը՝ այդ փուլում փաստացի հնարավորություն ունենալով գնահատելու:

Ընկերությունը հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Վարբադ» ՍՊԸ-ի առաջարկը ոչ համարժեք գնահատելու հիմքերը՝ գաբարիտային չափսերը հիմնավոր չեն, դրանք չեն բխում գնման առարկայի նշանակությունից և օգտագործման բնույթից, քանի որ գնման առարկան՝ բենզոագրեգատը, նախատեսված չէ որևէ արկղում կամ նմանատիպ սահմանափակ այլ վայրում տեղադրելու համար, որը կարող է սահմանափակել կամ իմաստազրկել գնման առարկայի օգտագործումն՝ ըստ նշանակության: Ավելին, այդ ագրեգատի հովացման համակարգը օդային է և արտադրող բոլոր գործարանների կողմից սահմանված շահագործման կանոնների համաձայն բենզոագրեգատի /գեներատորի/ բնականոն, անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է ագրեգատը յուրաքանչյուր կողմից ապահովել առնվազն 15-20 սմ օդային բաց տարածքով՝ հովացումը ճիշտ կազմակերպելու, արտադրող գործարանի կողմից սահմանված երաշխիքային ժամկետի վերաբերյալ պահանջը պահպանելու նպատակով: Վերոհիշյալի չպահպանումը կարող է հետագայում խնդիրներ առաջացնել պատվիրատուի մոտ՝ ագրեգատը հաճախակի դուրս կգա շարքից և երաշխիքային ժամկետի ավարտից հետո կպահանջվի լրացուցիչ գումարների անհրաժեշտություն հետագա վերանորոգման համար: Վերջիններս բացառվում են արտադրող գործարանի կողմից շահագործման կանոնները պահպանելու ժամանակ:

Ինչ վերաբերվում է ելքային փոփոխականության լարմանը, որը Ընկերության կողմից առաջարկվել է 230 Վ, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է 220 Վ, ապա Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ այն տեխնիկական

վրիպակ է (շփոթմունք է եղել առաջարկված ապրանքի մոդելի թվի հետ՝ «Вепрь АБП 2,2-**230** ВБ-БГ»), ինչի մասին Ընկերությունը տեղյակ է պահել նաև ՀՀ պաշտպանության նախարարությանը, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ելքային փոփոխականության լարումը 220 Վ է, ինչը պահանջվել է հրավերով, որը հաստատվում է նաև արտադրող գործարանի պարզաբանմամբ:

Այսպիսով «Վարբադ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգի ժամանակ գնահատող հանձնաժողովը 02.05.2016թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության առաջարկը գնահատելով հրավերով սահմանված գնման առարկային ոչ համարժեք՝ պատճառաբանելով սահմանված գաբարիտային չափերի տարբերությունը և ելքային լարումը, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6րդ, ինչպես նաև 31-րդ հոդվածներով սահմանված պահանջները, ինչի արդյունքում պայմանագիրը կնքվել է ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած ընկերության հետ:

Ընկերությունը, գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով, խնդրել է ապօրինի հայտարարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 04.10.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-105/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Վարբադ» ՍՊԸ-ի տնօրենը բողոքը պնդել է ամբողջությամբ:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Վարբադ» ՍՊԸ-ի 28.09.2016թ. բողոքի վերաբերյալ 12.10.2016թ. ԴՎԱ/3184 գրությամբ Կենտրոն է ներկայացրել դիրքորոշումը և Ընթացակարգին վերաբերող բոլոր անհարժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար միաֆազ շարժիչների (Բենզոագրեգատ 2 կՎտ) ձեռքբերման նպատակով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ հրավերի

պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը՝ համակարգի միջոցով (armeps.am) ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել էր երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է, նաև որ «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրի քննարկման արդյունքում պարզվել էր, որ այն տարբերվում էր հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրից և համարժեք չէր դրան: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել էր կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել էր նախկինում ներկայացված տեխնիկական բնութագիրը, այսինքն՝ առկա անհամապատասխանությունը մասնակցի կողմից չէր շտկվել, հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշել էր մերժել «Վարբադ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ 105/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲԽ-105/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-105/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Միաֆազ շարժիչների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վարբադ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ «Միաֆազ շարժիչներ (Բենզոագրեգատ 2 կՎտ)»- ելքային փոփոխական լարում - ***220 Վ***, բարձրություն - ***մինչև 550 մմ***, երկարություն – ***մինչև 600 մմ***:

3. Ընկերության կողմից ներկայացվել են առաջարկվող ապրանքի հետևյալ տեխնիկական հատկանիշները՝ «Միաֆազ շարժիչներ (Բենզոագրեգատ 2 կՎտ)»- ելքային փոփոխական լարում - ***230 Վ***, բարձրություն - ***մինչև 560 մմ***, երկարություն – ***մինչև 650 մմ***:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով, մասնավորապես.

- Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ելքային փոփոխական լարումը ***230 Վ*** է, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է ***220 Վ***,
- Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի բարձրությունը ***մինչև 560մմ*** է, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է ***մինչև 550 մմ***,
- Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի երկարությունը ***մինչև 650 մմ*** է, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է ***մինչև 600 մմ***:

5. **24.05.2016թ**. ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանգաս» ՍՊԸ-ի միջև կնքվել է միաֆազ շարժիչների ձեռքբերման պայմանագիր:

6. Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է հայտարարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգն ապօրինի:

<u>4. ԳԲԽ-105/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Վարբաղ» ՍՊԸ-ի 28.09.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.10.2016թ. ԴՎԱ/3184 գրությունը և կից փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության

10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 95-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 96-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: *Սույն կետում նշված անձը տալիս է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ դրական եզրակացություն,* ***եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին****:* Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով, մասնավորապես.

- Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի բարձրությունը ***մինչև 560 մմ է***, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է ***մինչև 550 մմ***,
- Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի երկարությունը ***մինչև 650 մմ*** է, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է ***մինչև 600 մմ***:
- Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ելքային փոփոխական լարումը ***230 Վ*** է, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է ***220 Վ***,

Ուսումնասիրելով «Վարբադ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված տեխնիկական բնութագիրը՝ Կենտրոնը արձանագրում է, որ որպես ապրանքի բարձրության չափսեր առաջարկվել են *մինչև* 560 մմ, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է *մինչև* 550 մմ, և երկու դեպքում էլ չի նշվել ստորին շեմ: Սրանից ուղղակիորեն բխում է, որ եթե Ընթացակարգի հրավերով պահանջվեր կոնկրետ 550 մմ, իսկ Ընկերությունը առաջարկեր կոնկրետ 560մմ, այսինքն՝ երկու դեպքում էլ բացակայեր «մինչև» բառը, ապա այս դեպքում Պատվիրատուն իրավացիորեն կարող էր մերժել Ընկերության հայտը՝ ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով:

Այսպիսով Կենտրոնը գտնում է, որ «Վարբադ» ՍՊԸ-ի առաջարկած ապրանքի *մինչև* 650 մմ երկարությունը ուղղակիորեն չի հակասում հրավերի *մինչև* 550 մմ բարձրությանը, քանի որ ստորին շեմ նշված չլինելու պայմաններում Ընկերության կողմից որպես մատակարարվելիք սարքի բարձրություն չի նշվել հենց 560 մմ, ինչը կգերազանցեր հրավերի պայմաններին, այլ Ընկերության կողմից առաջարկած մինչև 560 մմ պայմաններում կարող է լինել, օրինակ՝ 520 մմ, 530 մմ, 540 մմ և այլն:

Նույն տրամաբանությունը վերաբերվում է «Վարբադ» ՍՊԸ-ի առաջարկած ապրանքի երկարությանը ոչ համարժեք գնահատելուն (հրավերով պահանջվել է երկարություն՝ *մինչև* 600 մմ, իսկ Ընկերությունը առաջարկել է *մինչև* 650 մմ):

Բացի այդ, ըստ Ընկերության կողմից առաջարկված ապրանքը արտադրող «Էներգոպրոֆ» ՍՊԸ-ի 04.05.2016թ. գրության՝ «Вепрь АБП 2,2-230 ВБ-БГ» բենզոագրեգատի բնականոն, անխափան աշխատանքի համար անհրաժեշտ է ագրեգատը յուրաքանչյուր կողմից ապահովել առնվազն *15-20 սմ օդային բաց տարածքով:*

Ինչ վերաբերվում է ելքային փոփոխականության լարմանը, ապա Ընկերության կողմից առաջարկված «Вепрь АБП 2,2-230 ВБ-БГ» բենզոագրեգատի ելքային

փոփոխականության լարումը, ըստ «Էներգոպրոֆ» ՍՊԸ-ի նույն գրության՝ 220 Վ է, ինչը պահանջվել է հրավերով:

Ելնելով վերոշարադրվածից՝ Կենտրոնը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը *հայտերի գնահատման փուլում* չպետք է մերժեր Ընկերության հայտը՝ առաջարկված ապրանքը հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով, քանի որ *«մինչև»* բառի պայմաններում տարբերություն ակնհայտ առկա չէ, այլ «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից ապրանքը մատակարարելուց հետո միայն, ղեկավարվելով Կարգի 96-րդ կետի պահանջներով, ՀՀ պաշտպանության նախարարությունը կարող էր հիմնավոր գնահատել, թե մատակարարված ապրանքը ինչպիսի երկարություն կամ բարձրություն ունի, և համեմատելով պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի հետ՝ ընդունել կամ չընդունել «Վարբաղ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքը:

Վերոհիշյալի արդյունքում Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտում:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Վանգաս» ՍՊԸ-ի միջև ***24.05.2016թ.*** կնքվել է պայմանագիր, ուստի առաջարկում ենք «Վարբաղ» ՍՊԸ-ի 28.09.2016թ. բողոքը բավարարել. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-105/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Գևորգյան